ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 24

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Նոր Երզնկա համայնքի բնակիչ՝ Աղասի Փիլոյանի և համայնքի անասնաբույժ՝ Կաղեն Ղավալբաբունցի դիմումները դրամական օգնություն ստանալու խնդրանքով և հաշվի առնելով սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը՝ *որոշում եմ.*

1. Տրամադրել դրամական օգնություն 60000 (վաթսուն հազար) դրամի չափով համապատասխանաբար.
1) Աղասի Փիլոյանին - 30000 (երեսուն հազար) դրամ
2) Կաղեն Ղավալբաբունցին - 30000 (երեսուն հազար) դրամ
2. Հանձնարարել գլխավոր մասնագետ Հ. Նազարյանին բյուջեի համապատասխան հոդվածից կատարել վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 25

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Նոր Երզնկա համայնքի 17-րդ փողոցի 13տան բնակիչ՝ հանգուցյալ Սարգիս Ֆիդանյանի և 1-ին փողոցի 14 տան բնակչուհի՝ հանգուցյալ Ամալյա Մկրտչյանի ընտանիքներին տրամադրել ֆինանսական օգնություն 60000 (վաթսուն հազար) դրամի չափով համապատասխանաբար.

1) Սարգիս Ֆիդանյանի ընտանիքին 30000 (երեսուն հազար) դրամ

2) Ամալյա Մկրտչյանի ընտանիքին 30000 (երեսուն հազար) դրամ

2. Հանձնարարել գլխավոր մասնագետ Հ. Նազարյանին բյուջեի համապատասխան հոդվածից կատարել վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____

գ.Նոր Երզնկա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 26

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018թվականի ապրիլի 7-ի N 01/12.2/1566-18 գրության և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի մարտի 29-ի N 29.6/[444295]-18 հանձնարարականի՝ *որոշում եմ.*

1. «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում 2018թվականի ապրիլի 14-ին, մայիսի 12-ին, հուլիսի 21-ին, օգոստոսի 25-ին և հոկտեմբերի 20-ին Նոր Երզնկա համայնքում իրականացնել համայնքային շաբաթօրյակ:
2. Շաբաթօրյակի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ներգրավել համայնքի բնակիչներին և համայնքի տարածքում գործող բոլոր կազմակերպությունների հնարավորություններն ու միջոցները:
3. Հանձնարարել համայնքի տարածում գործող կազմարեպությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարներին շաբաթօրյակի միջոցառումների շրջանակներում մաքրել, բարեկարգել իրենց կազմակերպության տարածքը և հարակից շրջակայքը:
4. Հանձնարարել Նոր Երզնկայի համայնքապետարանի աշխատակազմին համապետական շաբաթօրյակի օրը կազմակերպություններին ապահովել անհրաժեշտ տեխնիկայով, գործիքներով և նյութերով:
5. Շաբաթօրյակի անցկացման և կատարման աշխատանքների ծանուցման և դրանց նկատմամբ հսկողության իրականացնումը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Մարդոյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 թ.
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 27

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի ինքնակամ կառուցված շենքերի ինքնակամ զբաղեցված հողամասերի կարգավիճակի մասին 510-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նոր Երզնկա համայնքի բնակիչ Սերյան Սարուխանյանին սեփականաշնորհվել է 0.32 հա խաղողի այգի և առաջին պետական գրանցման աշխատանքների ժամանակ քարտեզագրման արդյունքում նրան պատկանող խաղողի այգու մակերեսը կազմել է 0,3252 հա, սակայն ծածկագրվել է երկու միավորով (0133-0012 և 0133-0013 ծածկագրերով): Քարտեզագրման արդյունքում ավել օգտագործվող 0,0052 հա հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար: Այն չի խոչնդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմաշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և չի առաջացնում սերվիտուտ՝ *որոշում եմ.*

1.Ճանաչել Սերյան Սարուխանյանի սեփականության իրավունքը Նոր Երզնկա համայնքում ըստ կադաստրային քարտեզագրման 0133-0012 և 0133-0013 ծածկագրերով փաստացի օգտագործվող 0,3252 հա հողամասի նկատմամբ:
2. Որոշումը ներկայացնել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ մարզային միավորված ստորաբաժմանը պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 28

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի ինքնակամ կառուցված շենքերի ինքնակամ զբաղեցված հողամասերի կարգավիճակի մասին 510-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նոր Երզնկա համայնքի բնակիչ Միսակ Ղազարյանին սեփականաշնորհվել է 0.26 հա վարելահող և առաջին պետական գրանցման աշխատանքների ժամանակ քարտեզագրման արդյունքում նրան պատկանող վարելահողի մակերեսը կազմել է 0,2785 հա (0129-0007 կադաստրային ծածկագրով):
Քարտեզագրման արդյունքում ավել օգտագործվող 0,0185 հա հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար: Այն չի խոչնդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմաշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և չի առաջացնում սերվիտուտ՝ *որոշում եմ.*

1.Ճանաչել Միսակ Ղազարյանի սեփականության իրավունքը Նոր Երզնկա համայնքում ըստ կադաստրային քարտեզագրման 0129-0007 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,2785 հա հողամասի նկատմամբ:
2. Որոշումը ներկայացնել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ մարզային միավորված ստորաբաժմանը պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 29

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 34 եզրակացությունը, Նոր Երզնկա համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 4-ի թիվ 23 որոշումը՝ *որոշում եմ.*

1. Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,179141 հա և 0,014342 հա (կադաստրային ծածկագրեր՝ 07-050-0007-0002 և 07-050-0577-0001) հողերի և գյուղատնտեսական նշանակության 0,180238 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-050-0107-0001) արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի կատեգորիա՝ կադաստրային քարտեզում առկա սխալի ուղղման նպատակով:
2. Սույն որոշումից ծագող որոշումներն ենթակա են գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20__ թ. _____ __
գ.Նոր Երզնկա